

Նիւթերն ըլլան : Վեցին դիտողութիւն
մ'ալ այն գրատան վրայ այս է , որ ա-
զիւսակներէն շատերը , պարզապէս
ընդօրինակուրիւնք են , շատ աւելի
հին բարելացի բնագիրներու . և այս

բանս տարակոյս չվերցընէր « Քաղդէա-
կան Ծննդոց » բնագիրներուն նկատ-
մամբ :

Կը շարտնակոյի :



Զ Ա . Ն Ա . Զ Ա . Ն Գ Ի Տ Ե Լ Ի Ք

Արտաշագդայ շորայից առասպելք .
— « Թագաւոր մի կայր Հայոց Արտա-
ւազ անուն , և ունէր որդի մի խելա-
գար Շիդար անուն . և 'ի մեռանեն
Արտաւազայ ոչ ետ զժագաւորութիւն
Շիդարայ՝ զի խելագար էր . վասն որոյ
և աշխարհս վրդովեցաւ և աւերումըն
լինէր ոչ սակաւ . եւ յաւուր միում հե-
ծեալ Շիդար 'ի ձի , և ետ փող հար-
կանել թէ կամիմ թագաւորել . և ել
գնաց ընտիր հեծելօք 'ի զրօանս , և
ելեալ 'ի վերայ կարմընջի գետոյն վասն
յանցանելց . և անդէն շարժեալ զնա
այսոյն պղծոյ՝ անկաւ 'ի գետն և կո-
րեաւ : Եւ հեծելազէրքն համբաւեցին
թէ աստուածքն Շիդարայ յափշտակե-
ցին զնա և եղին 'ի Մեսաւ լեռան , որ է
Աւագ Մասիս , և անդ կայ շղթայած . և
երկու չուն , մին սպիտակ և միւն սեաւ
կու լիզեն զղթայսն Շիդարայ հանա-
պազ և 'ի տարելիցն 'ի մազըն գայ , որ
թէ կտրի նա ելնէ և զաշխարհս ան-
ցուացէ : Վասն որոյ կարգեցին կա-
խարդքն առասպել զիմօք թէ 'ի տա-
րէմնւտն , 'ի նաւասարդի ա , ամենայն
գործաւոր զիւր գործն զինչ և իցէ 'կո-
փէ երեք անգամ գարրինն և այլն : Զի
կապն Շիդարայ որ 'ի մազն եկեալ է
'ի կտրիլ գարձեալ հաստանայ և ամ-
րանայ , որ ոչ ելնէ Շիդարն և զաշ-
խարհս անցնէ : Այսպիսի առասպել
զիմօք վարէին Հայք մինչև 'ի սուրբ
Գրիգոր Լուսաւորիչն մեր , որ խափա-
նեաց զայն , և կարգեաց տօնել 'ի մինն

նաւասարդի սրբոյն Յովհաննու կարա-
պետին և Աթանազինեայ հայրապե-
տին . զի սուտն և գարշելին խաֆանես-
ցի , և սուրբ Նշարիտն հաստատեսցի ,
'ի փառս Գրիստոսի Աստուծոյ մերոյ ,
որ է աւրծնեալ յաւիտեանս ամէն» :

Ասկիփորիկ :

Հետաշրուրին աստեղոց . — Ըստ
նորագոյն գիտողաւթեանց , լուսոյ երա-
գութիւնն է 185360 մղոն մէկ երկ-
վայրկենի մէջ . Ուսափ լցոսը արեէն
մինչև մեզի համնելու համար կ'ուզէ 8
վայրկեան և 17 երկվայրկեան . և ամե-
նէն մօտ հաստատուն աստղէն մինչև
երկիր համնելու համար , լցոսը կ'ուզէ
երեք տարի և հինգ ամիս : Օրինակի
համար , լուսոյ ճառագայթ մը , որ այսօր
բևեռային աստղէն ճամբար ելէ , մինչև
մեզի համնելու համար կ'ուզէ 37 տարի
և 7 ամիս : Պոսիդոն մոլորակէն լցոսը
մեզի համնելու համար կ'ուզէ 4 ժամ և
10 վայրկեան . և մեր մոլորակային դրու-
թիւնը ծայրէ ծայր կտրելու համար ,
լցոսը կ'ուզէ իբր 8 ժամու ½ : Այսպի-
սի հաշիւներու մէջ աստեղաբաշխք մի-
ութիւն չափու կ'առնուն երկրիս արեէն
ունեցած միջին հեռաւորութիւնը : Ուս-
տի համարելով այս հեռաւորութիւնն
իբրև 1 , մեզի մօտագոյն հաստատուն
աստղը , որ է ա կենդաւորոսին , կ'ըլլայ
222300 անգամ աւելի հեռու քան զա-
րև . իսկ բևեռային աստղը կ'ըլլայ 2

միլիոն և 267 հազար անգամ աւելի հեռու քան զարկ։ այս հեռաւորութիւնները գտներ են ամենաճիշդ հաշիւներով գարուս երեւելի աստեղաբաշխ։ Ճնիկ աստղը և միլիոն և 69 հազար անգամ հեռու է երկրէս քան զարկ, և անոր ըցը մեզի հասնելու համար կ'ուզէ 16 տարի և 9 ամիս։

Բնակիչք երկրի. — Անցեալ տա-

րուան մէջ կատարուած վերջին վիճակագրութեանց համեմատ, երկրիս բնակչաց բոլորական թիւն է 1423,917000 և բնակելի ցամաքին մակերեսոյթն է 54,340800 քառակուսի մղոն։ Հետևաբար առ իւրաքանչիւր քառակուսի մղոն կ'ընկնայ իբր 28 բնակիչ։

Հետևեալ աղիւսակէն կը տեսնուի որ երկրիս ամեն մասներէն աւելի Եւրպականական կամարի ունի։

Թվա.	մդոն	Բնակիչ	առ չո. մդոն
Եւրոպա	3,776493	309,178500	82
Ասիա	17,079383	824,548500	48
Աֆրիկէ	14,417394	199,921600	17 1/2
Աւստրալիա, Բոլինէդիա	3,381210	4,748600	4 1/2
Ամերիկա	15,687890	85,519800	5 1/4:

Յամին 1876 երկրիս բնակչաց թիւն աճեցաւ 27 միլիոն աւելի քան զնախընթաց տարին, իսկ երկրիս մակերևոյթը նուազեցաւ 83349 քառակուսի մղոն։

Ահաւասիկ Եւրոպայի տէրութեանց բնակչաց թիւն ըստ վերջին աշխարհականարի։

Գերմանիա 1875	42,723242
Աւստրիա-Հռոնդարիա 1876	37,700000
Զուլցերի 1870	2,669147
Հոլանտա 1875	3,869527
Պելճիա 1874	5,336634
Լուքսեմպուրկ 1875	205158
Ռուսիա 1870	74,730980
Շուեա 1875	4,883294
Նորուեկիա 1875	1,802882
Տանիմարդա 1876	1,903000
Գաղղիա 1872	36,102924
Անգղիա 1866	33,450000
Սպանիա 1870	16,551647
Անտորդա 1870	12000
Բորդուգալ 1874	4,298884
Իտալիա 1875	27,482174
Մոնագոյ 1874	5741
Սան Մարինոյ 1874	7846
Թուրքիա Եւրոպայի 1874	8,506900
Ռումանիա 1873	5,073000
Սերուիա 1875	4,377008
Մոնդէնէկրոյ 1876	190000
Բունաստան 1870	4,457894

Ակսեալ 1874 թուականէն մինչև
հիմա գերմանից բնակիչներն աճեր են
1,693762 ողիք։ Նորուեկից մէջ կատա-
րուած աշխարհահամարն՝ 'ի սկիզբն
1876 թուին կու տայ աճումն բնակչաց
12000 ողիք։ Անգղիոյ բնակչաց աճումն
եղեր է 1876 տարւոյն մէջ 35200 ո-
դիք քան զնախօնթաց 1875 տարին։
Թուրքիոյ բնակիչքն եւրոպա, Ասիա, և
Ավրիլէ են 48,283400 ոդիք։ Իսկ
Թուրքիոյ այլ և այլ եւրոպական գա-
ւառաց, բնակիչքը կը համարուին
8,000000 ոդիք, բայց նորագոյն աշխար-
հահամարը կը հանեն մինչև 8,500000
ոդիք։ Բուսից բնակչաց թիւն է, եւրո-
**պա և Ասիա, 86,588000 ոդիք։ Գրե-
թէ կրկինն թուրքիոյ բնակչաց։ Բու-
սից ցամաք երկրին մակերեսոյթն է
8,456500 քառակուսի մղոն։**

Հնդկաստանի բնակիչքն՝ Անգղիոյ
հպատակ, են իր 239 միջոն։ Իսկ ըշ-
նակչաց խտութիւնը կը տարրերի ընդ
մէջ 5 և 750 առ մի քառակուսի մղոն։
Մեծագոյն խտութիւնը կալկադայի նա-
խագահութեան մէջ է։

Զինաստան ունի բնակիչ 405 մի-

լիոն, և երկրէն դուրս ալ կը գտնուին
 26,500000 Զինացկիք։
 Աւատրալիոյ բնակչաց բոլորական
 թիւն է, ըստ նորագոյն վիճակագրու-
 թեանց, մէկ միլիոն և 867000։ Նոր
 Զելանտայի բնակչաց թիւն է 421326։
 Խսկձարոնի բնակիչն է 33,299044։
 Կանատա ունի բնակիչ 3,672116։
 Ալերիկայի Միացեալ-Նահանգը ասկէ
 քանի մը տարի առաջ ունէին 40 մի-
 լիոն բնակիչ, իսկ հիմա ունին 44 մի-
 լիոն բնակիչ։

Մեծիկոյ ունի 9,276079 բնակիչ։
 Կեդրոնական Սմերիկայի այլ և այլ հա-
 սարակապետութիւնք ընդ ամենն ու-
 նին և միլիոն բնակիչ, և հարաւային
 Ամերիկայի այլ և այլ տէրութիւնք ընդ
 ամենն ունին 21,309750 բնակիչ։ Միայն
 Պրազիլի կայսրութիւնն ունի 11 միլիոն
 բնակիչ։

Երկրին վրայ կան 215 քաղաքք ո-
 րոնց բնակիչներն աւելի են քան 100000,
 և 29 քաղաքք՝ որոնց բնակիչներն ա-
 ւելի են քան 500000։

Հետևեալ քաղաքները միլիոնէն ա-
 ւելի բնակիչ ունին։

Քարիզ (Գաղղիա)	1,851792
Գանդոն (Չինաստան)	1,000000
Լոնտրա (Ոնգղիա)	3,489428
Նոր-Օսոք առեալ Պրուքլայն (Ամերիկա)	4,535622
Պեռլին (Բրուսիա)	4,045000
Վեննա (Աւստրիա)	4,001999

Քաղնապատակուրիւն միջատաց։ —
 Որչափ մանր ըլլան կենդանիք զորոնք
 բնազնինն իր գիտողութեանց առար-
 կայ կ'առնու, այնչափ աւելի զարմա-
 նալի են երևոյթքն որ անոնք կ'ընծա-
 յեն. և այս բանիս լուսաւոր օրինակ
 մ'են միջատք։ Իենդանական թագաւո-
 րութեան այս ընդարձակագոյն զասը,
 զոր շատ անգամ ոտնակուխ կ'ընենք և
 ոչ մտադրութեան արժանի կը համա-
 րինք, Նկատելով ըստ պաշտամանն առ
 որ իւրաքանչիւր տեսակ կը պարապի,
 ըստ բազմազան ունակութեանցն ո-
 րովք անոնց կեանքը բոլորովին նուի-.

րուած է որ և իցէ գործ մը կատարե-
 լու. բայց 'ի վեր քան զամենայն ըստ
 ահագին բեղնաւորութեանն որով կը
 սերին, իրաւունէ մարդուս միտքը
 կ'ապչի։ Միջատաց քանի մը տեսակնե-
 րու անհատից թիւն, որ յաջորդական
 սերնդեամբ մէկ միջատէ մը ծնանե-
 լով քիչ ժամանակիէն այնպիսի խելքէ
 մոքէ դուրս քանակութեան մը կը
 հասնի, անհաւատայի կ'ըլլար թէ որ
 շատ տեսակ գիտողութիւններով և ըս-
 տուգապատում բնազնիններէ հաս-
 տատուած չըլլար։ Տեսակ մը մթեղ
 կայ, որուն էգն ամէն անգամ այնչափ

բազմաթիւ ձու կ'ածէ որ տասներորդ
սերնդիտանն անհատից թիւը կը հասնի
հինգիրինի, այսինքն տասնեռթիւ զրու-
յով քանակութեան մը, Սպիտակ մըր,
շինքն (termite) այնպիսի միջատներ են,
որնք շատ անդամ բոյն կը գնեն և
կ'ապրին հաստարանաց գերաններուն
վրայ. արդ փորձով տեսնուած է որ
անոնց իւրաքանչիւր էզը վայրկեանը 60
հաւկիթ կ'ածէ, որ է ըսել ժամն 8600
հաւկիթ, և օրն 86400 անհատոք կ'ածին
ամեն մէկ էդին սերունդէն լիննէս այս
հրաշալի բեղնաւորութիւնը կ'ակնար-
կէր երբ կ'ըսէր թէ ճանճ մը միայն իր
սերնդիտանն օգնութեամբ աւելի շու-
տով կրնայ սպառել ձիու տատակ մը
քան թէ առիւծ մը: Շատ տեսակ միջա-
տաց սատակներով մնանիլը նախա-
խամական տնտեսութիւն՝ մ'է, վասն զի
ապականութեան այն սերմննքն օդուն
մէջ չեն սփոռուիր, և այն միջատաց ար-
տաքայ կարգի բազմապատկութեան
պատճառ կ'ըլլան: Բնութիւնն իրեն
այս նախախամական առելանուները
չէր ունենար՝ թէ որ այնպիսի բազմա-
ծնութեամբ չսերէին: Այս բազմածնու-
թեամբ է որ կը մեկնուին այն անթիւ
խումբերն միջատաց, որոնք երբեմն
ամբողջ գաւառներ կ'ողոզեն, և օդուն
մէջէն անցնելու ժամանակ ամպի նման՝
արևը կը խափանեն: Իւ այս բանիս
հաստատութիւն՝ ունինք թէ ՚ի Սուրբ
դրոց և թէ արտաքին պատմութենէ
մարախներու արշաւանքն: Արաբացի
առասպել մը հետևեալ խօսքը կը գնէ
մարախներուն բերանը. Մեզմէ իւրա-
քանչիւրն 99 հաւկիթ կ'ածէ. թէ որ
100 հաւկիթ ածելու ըլլար, անապատ
կը գարձունէինք բոլոր աշխարհքս:
Ասկէ կ'իմացուի թէ ինչ վնաս կը հաս-
ցունէին այն միջատներն եթէ անար-
գել անելու ըլլային, մանաւանդ երկ-
րագործութեան: աղէկ որ զիրար կը
ջարգեն, ու շատ մը թույլուներ ե կեն-
դանիք անոնցմով կը սնանին. որով մի-
ջատոք ալ հաւասարակշռութեան մը
մէջ կը պահուին, նման կենդանական
ցեղապետութեան միւս տեսակաց:

նիսկարայի ջրվէժը. — Շատ ճա-
նապարհորդաց, մանաւանդ բանա-
ստեղծներու քերթողական խանդը վա-
ռեր էր երբեմն Ամերիկայի Նիսկարա
յշվէժը, որ հիմա բոլորովին անտարբեր
առարկայ մը դարձեր է. վասն զի վր-
ային շոգեշարժ մեքենան սուլելով ան-
դադար կ'անցնի կը դուռնայ, և ափանցը
վրայի ժայռերէն առկախեալ կամուրջ-
ներ ձգուած են օդուն մէջ: Հիմա ալ
կ'ըսուի թէ այս անուանի ջրվէժը պի-
տի գործածուի իրը շարժիչ զօրութիւն:
Անցեալ մայիսի սկիզբն այս ջրվէժին
ջրաբաշխական կարողութեան սեպահ-
կանութիւնն անուրդի հանուեցաւ, և
71000 տողարի (ֆուանգ 355000) ծա-
խուեցաւ:

Նիսկարայի միւս մասն ալ, որ կա-
նադայի կողմը կ'ընկնայ և կ'ըսուի
Հօրտե Շու (կամ Պայտ Չեյ), նոյնպէս
աճուրդի պիտի հանուի, դիտնական մը
ետեւէ է քննելու թէ ինչակս կարելի է
հեռուներն հաղորդել այն ջիռ Պայ-
տին շարժիչ զօրութիւնը: Զաշիւ ըրեր
է որ այն կողմանէ վար թափուած ջր-
րոյն քանակութիւնն է ժամը 100,000000
տակառաչափ:

Միայն այս ջրվէժին տուած զօրու-
թիւնն է 16,800000 ձիոց ուժ. և ուղե-
լով գյոցանել այս ուժը շոգւով, պէտք
է սպառել տարին 266 միջին տակա-
ռաչափ հակբածուխ: Դիտելու է որ
1874 տարույն մէջ ելած հանքածուխն
էր իրը 275 միջին տակառաչափ: ուս-
տի վերյոյիշեալ գիտնականը կ'ըսէ, թէ
միայն ջիռ Պայտին թափուածքը բա-
ւական է շարժել աշխարհիս բոլոր գոր-
ծարաններուն, երկաթուղիներուն և
շոգենաւուց մեքենաները:

Ինչո՞ւ ծովն աղի է. — Յիրաւի շատ
հետաքրքրական է գիտնալ թէ ինչէն
ծովու չուրն աղի է: Ումանք ըսին թէ
ծովուն յատակն աղէ մեծամեծ լիոներ
ըլլան. բայց այս մեկնութիւնը թէ և
ամենապարզ ըլլայ, զիւրին է հերեւլ.
վասն զի աղի ջուրն աւելի ծանր ըլլա-
լով քան թէ անուշ ջուրը, լուծուած

աղը ծովուն յատակը կը նստէր, և ոչ
թէ երեսը կ'ելլէր. ճիշդ նման գաւաթ
մը շաբարախտառն ջրոյն, որ եթէ շխառ-
նուի, բոլոր շաբարն գաւաթին յատակը
կը նստի: Զի կընար ըստովիլ որ ծովն ան-
դադար շարժման մէջ է. վասն զի ամե-
նէն սաստիկ փոթորիկներն ալ հազիւ
թէ քանի մը մէջը խորութեամբ կը թա-
փանցեն ծովուն մէջ: Բայց փոխանակ

այս այլ և այլ կարծեաց քննութիւնն ը-
նելու, դիտենք որ ծովու ջուրն ոչ միայն
հասարակ աղ կը բովանդակէ, այլ նաև
շատ մը ուրիշ այլ և այլ աղեր. ած-
խուսներ, քլորուկներ, ծծմբուտներ,
կիր, մագնեսիա, սոտա, և այլն, և մին-
չև արծաթ: Ուստի Միջերկրական ծո-
վուն ջուրը հարիւր մասանց մէջ կը բո-
վանդակէ

Քլորուկ սոտիոնի	
» կրածնի	
» մագնեսիոնի	
» բոդասիոնի	
Եծմբուտ մագնեսիայի	
» կրի	
Ղրոմուկ սոտիոնի	
Ածխուտ կրի	

Բովանդակութիւն աղից առ հարիւր 43.73 մասունք:

29.42 մասունք	
6.08	»
3.22	»
0.50	»
2.48	»
1.36	»
0.56	»
0.11	»

Սեւաններ որ աղի են այն լիճերն, ինչ-
պէս կազմից ծովն ու Մեռեալ ծովն,
որոնք մեծամեծ գետեր կ'ընդունին ա-
ռանց հանելու իրենցմէ գետ, ու ա-
նուշ են այն լիճերն՝ որոնց մէջէն գետ
կ'անցնի, և հետեւաբար կարելի չըլլար
անոնց մէջ այն խտացումն առաջ գալ
ինչ որ վերագոյն ըսինք: Բայց կրնայ
մէկն հարցունել. Ուստի առաջ կու-
գան այն աղերն որ լուծուած են անուշ
լիճերուն մէջ.... Առ այս դիւրին է պա-
տասխանել, թէ այն աղերն երկրիս այլ
և այլ ժայռերուն մէջ կը գտնուին, և
ջուրը կը լուծէ զանոնք և հետն առած
կը տանի: — Բայց ինչպէս այն աղերը
կը գտնուին ժայռերու մէջ.... Ճիշդ-
այնպէս ինչպէս որ նոյն ժայռերը կը
գտնուին, վասն զի տիեզերաց Արար-
շապետը դրեր է զանոնք:

Ուրեմն միակ պատճառ մը կընայ ըլ-
լալ այս այլ և այլ գոյացութեանց որ
ծովուն ջուրը կը բովանդակէ: Դար-
ձեալ երկրիս երեսը վազուկ լիճերուն
մէջ ալ այս ամեն աղերուն հետքը կը
գտնուին, մանաւանդ սոտիոնի քրորու-
կին կամ հասարակ աղին: Որդ երբոր
գետերը ծով կը թափին, անոնց լիճերն
ենթակայ ըլլալով շարունակ շողիաց-
ման, և հաստատուն նիւթերը շողիա-
նալով կամաց կամաց կ'անին, և այն
կէտը կը համնին ինչպէս որ հիմա կը
գտնենք զանոնք ծովու ջրոյն մէջ: Իսկ
հասարակ աղին առաւելութիւնը քան
զուրիշ գոյացութիւնը՝ ասով ալ դիւ-
րաւ կը մեկնուի, որ երկրաւոր բուսա-
կանք ամենաքիչ քանակութեամբ կը
ծծեն զայն, և գետերն ալ ինչպէս ը-
սինք անդադար այս աղը կը բերեն: Եւ
՚ի նպաստ այս վարդապետութեան կը